Զարքունի Հրովարտակս և զդատաստանական վճիռս և հետկարս տուեալ 'ի դիւանաց և 'ի դատարանաց 'ի թուրք և յարաբացի բարբառ, մտադիւր և զգուշաւոր իմն քննութեամբ հեղաք 'ի բնիկ մեր հայեցի խօսս՝ եդեալ առ ընթեր իւրաքանչիւրոց զոյդ ընդ Փրկչական թուականին՝ եւ զթուականն հիճրէթի. է զոր ամբողջութեամբ եդաք 'ի կարգի գործոյս. եւ է զորոց իմաստս և եթ յաւելաք 'ի նոյն՝ խորշելով միանգամայն յաւելորդ և յերկար բանից։ Զգաղիական նամակն և զարաբական արձանագիրս իսկութեամբ պահեցաք յաւելլով և զթարգմանութիւնս նոցա։ Ի յաջորդութենէ Եպիսկոպոսաց կամ Պատրիարգաց Սրբոյ Առաքելական Աթոռոյս զայնս միայն եդաք 'ի կարգի Պատմութեանս՝ զորոց գործս, և զորս միանգամ վաւերական գտաք. թէպէտ եւ ոմանք 'ի Միաբանաց Ս. Ուխտիս, յառաջագոյն առանձին աշխատ եղեն առ այս գործ, և 'ի տիպ արձանացուցին։ Հուսկ ապա՝ զայս դուզնաքեայ վաստակ մեր քրտնաթոր կամակար մտօք մատուցանեմք օրհնեալ ազգիս Հայոց յօգուտ եւ 'ի զարդացումն բանասէր մտաց, 'ի դիւրութիւն և 'ի մխիթարութիւն Միաբանական Ս. Ուխտիս ողջամիտ Հարց և Եղբարց, և 'ի փառս միոյն Աստուծոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։